«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու և Հայ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Թամարա Աշխարհիկի Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի գ. Շահումյանի Արտակ Համբարձումյանի անվան միջն. դպրոց

Երևան 2022

Թեմա — Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Հարց — Հիսուսի առակների միջոցով ինչպես երեխաների մեջ ձևավորել ներողամտություն, հանդուրժողականություն և սեր։

Նպատակը

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հիսուսի առակների դաստիարակչական բնույթը հինգերորդ դասարանի սովորողների վրա։

Նպատակից ելնելով աշխատանքում բացահայտել ենք հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել և վեր հանել Հիսուսի առակների դաստիարակչական նշանակությունը V դասարանի սովորողներրի համար։

2. Ընթերցել տալ Աստվածաշնչյան առակները։

3. Դասագրքում ընդգրկված աստվածաշնչյան հետևյալ առակների «Մարդը, որը ներել չէր ուզում» և «Մոլորյալ որդու վերադարձը և լրացուցիչ «Այգու մշակների վարձը»՝ առակի միջոցով դաստիարակել ներողամտություն, հանդուրժողականությունը և զղջում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ.....6

ԳԼՈՒԽ 2 «ՄԱՐԴԸ ՈՐԸ ՆԵՐԵԼ ՉԷՐ ՈՒԶՈՒՄ» ԱՌԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....11

ԳԼՈՒԽ 3 «ՄՈԼՈՐՅԱԼ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ» ԱՌԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առակի ժանրը միշտ էլ արդիական է եղել, առակով դաստիարակել մարդկային լավագույն արժեքները ձևավորելը և մարդկային մոլորությունները պախարակելը միշտ էլ արդիական կմնան։

Առակ (Առ ակն՝ աչքի առաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները։

Առակները փոքրածավալ արձակ կամ չափածո ստեղծագործություններ են։ Սովորաբար բաղկացած են լինում երկու մասերից՝ բուն կառուցվածքից և բարոյախրատական մասից։ Երկրորդ մասում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ հենց առակի բարոյախոսությունն է։

Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն։

Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն է, իմացական որակների զարգացումն ու ձևավորումը։Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների գումարով, չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով։ Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավոր-ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը։

Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որը իրենից ներկայացնում համագործակցային ուսուցում և պահանջում է հնարավորինս ճիշտ և հստակ կազմակերպում։

Հիսուսի առակներում չկա այլաբանություն. նրա հերոսները մարդիկ են՝ իրենց լավ և վատ գծերով։ Այս առակները տարբերվում են մարդասիրական և բարձր բարոյական արժեքներով։ Այսօր էլ դրանցից շատերը զետեղված են դպրոցական դասագրքերում, որոնց ուսուցման և ճիշտ վերլուծման նպատակով աշակերտների մեջ դաստիարակվում

են ներողամտություն, հանդուրժողականությունը, մարդասիրություն և այլ առաքինություններ։

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հիսուսի առակների դաստիարակչական բնույթը հինգերորդ դասարանի սովորողների վրա։

Աշխատանքում առկա են ինչպես ավանդական, այնպես էլ նոր մեթոդներ , որոնք ավելի հետաքրքիր և մատչելի կդարձնեն առակի ուսուցումը։

ԳԼՈՒԽ 1 ՀԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առակը սկզբնապես ժողովրդական բանավոր ստեղծագործություն է եղել, կենդանական հեքիաթի մի տարատեսակ: Կարելի է ասել, որ առակը այդ տեսակի հեքիաթից է ծնվել:

Առակը խրատական բովանդակություն ունեցող փոքրածավալ ստեղծագործություն է: Առակներում հանդես եկող կենդանիների, բույսերի , տարբեր առակաների ու բնության երևույթների միջոցով ակնարկվում են մարդիկ իրենց բացասական և դրական գծերով: Առակներում ներկայացվում են մարդկային տարբեր բնավորություններ, ծաղրվում զանազան արատներ՝ ծուլությունը՝ ստախոսությունը, նախանձը, չարությունը, ագահությունը, ժլատությունը:

Առակներում մեծ տեղ են զբաղեցնում երկխոսությունները, ժողովրդական բառերը և բառակապակցությունները (դարձվածքները), խոսքն ավելի կենդանի և անմիջական դարձնելու համար:

Ամբողջ աշխարհում հայտեր են հին հունական առակագիր Եզոպոսի , ֆրանսիացի Լաֆոնտեզ, ռուս Ի. Կռիլովի, գերմանացի Գ. Լեսինգի առակները: Հայ առակագրությունն սկսվում է 12-13-րդ դարերից: Հայ միջնադարյան լավագույն առակագիրներներն են Մ. Գոշը , Վ. Այգեկցին:

5-րդ դասարանի մայրենիի դասագրքի « Առակս ի՞նչ կցուցանե» բաժնում զետեղված են տարբեր հեղինակների արձակ և չափածո առակները, ինչպես նաև Հիսուսի առակներից «Մարդը, որը ներել չէր ուզում» առակը: Հիսուս Քրիստոսն իր միտքը առավել հասկանալի դարձնելու նպատակով հաճախ խոսում էր առակնբերով , որոնք իրական կյանքից վերցված պատմություններ էին:

Վաղնջական ժամանակներից սկսած՝ մարդկանց մտահոգել են բազմաթիվ հարցեր. ի՞նչ է սերը, ազնվությունը, արդարությունն ու բարությունը, ինչպես նաև ստորությունը, նախանձը, չարությունն ու ատելությունը: Տարբեր ժամանակներում ստեղծված և սերնդեսերունդ փոխանցվող առակներում, ասացվածքներում ժողովուրդը գովերգել է բարին ու արդարը և վատաբանել չարն ու մերժելին: Բարությունը,

արդարամտությունը, համեստությունը, ճշմարտասիրությունը բարոյական հատկանիշներ են. <<Բարու ճանապարհի սկիզբը արդարություն գործելն է >>[1]:

Տասը պատվիրաններն են.

1. Ես եմ քո Տեր Աստվածը, ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար:

2. Կուռքեր չունենաս:

3. Աստծու անունը զուր չտաս:

4. Պատվիր՛ քո հորն ու քո մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն հողի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ:

5. Մի՛ սպանիր:

6. Մի՛ շնացիր:

7. Մի՛ գողացիր:

8. Մի՛ ստիր:

9. Քո հարևանի դեմ սուտ վկայություն մի՛ տուր:

10.Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր:

Առակների Գիրքն ասույթների և ուսուցողական խրատների ժողովածու է, որտեղ ար-ծարծված են բազում արդիական թեմաներ՝ արդարություն, հիմարություն, հարստու-թյուն, աղքատություն, ծուլություն, նենգություն, կաշառք և այլ: Պետք է նշել Առակաց գրքի հետևյալ տողերը. <<Տիրոջ օրհնությունը արդարների գլխին է, բայց տարաժամ սուգը պիտի փակի ամբարիշտների բերանը>>, <<ծույլերը կարոտ պիտի մնան մեծության, բայց ժրաջանները կհասնեն մեծության>>, <<նենգամիտ մարդը գաղտնիքը հայտնում է ատյանում, բայց հոգով հավատարիմը ծածկում է գործը>>, <<աղքատությունը խեղճացնում է մարդուն, ժրաջան ձեռքերը հարստացնում են նրան>>: Նրանում օգտակար խորհուրդներ ենք գտնում այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ կեղծավորությունը, հանդգնությունը, խոսքը պահելը, երեխային կրթելն ու խրատելը, խաբեությունը, աղոթքը, ծաղրանքը, խոնարհությունը, պարտք տալը, բարությունը, վստահությունը և այլն. <<ով բարիք է անում, նա բարության շնորհ կգտնի>>, <<անզգամն անարգում է հոր խրատը, բայց հանդիմանությանը հնազանդ

[1] Աստվածաշունչ, գիրք Առակաց 16:5, էջ 754

որդին ողջախոհ է>>, <<ծաղր անողին ծեծիր և միամիտը կխոհեմանա. եթե բանիմացին հանդիմանես, նա ավելի գիտուն կդառնա>>: Առակներ գիրքը պարունակում է բազում իմաստուն և Աստծուց ներշնչված խորհուրդներ:

Ամբարիշտները հակադրվում են արդարներին. ամբարիշը կբռնվի իր ծուռ ճանապարհներում, և նրա հարստությունը չի փրկի ցասման օրը: Արդարը կանգնած է կյանքի ճանապարհին: Կարևորվում է բարոյական մաքրությունը. Սողոմոնը շարունակ զգուշացնում է անբարոյությունից հեռու մնալու մասին: Ամուսնական հավատարմությունը խախտողները դժբախտանում են և անպատվություն են բերում իրենց վրա: Առակաց գրքում նշվում է. <<ժրաջան կինն իր ամուսնու պսակն է. ինչպես փայտի համար վնասակար է որդը, այնպես էլ չարագործ կինը կորստի կմատնի ամուսնուն [2]>>, <<շնորհալի կինը բարձրացնում է ամուսնու փառքը, մինչդեռ անարգանքի աթոռ է իրավունք ատող կինը>>, <<իմաստուն կանայք շինում են իրենց տները, իսկ անզգամ կանայք կործանում են դրանք իրենք ձեռքերով>>, այսինքն յուրաքանչյուր կին ինքն է որոշում իր վարքագիծը և իր ընտանիքի բարօրությունը: Առակներում շատ նկարագրություններ կան այն մասին, թե ինչպիսին պետք է լինի առաքինի կինը: Կինը չպետք է լինի կռվարար և ամոթալի վարմունք ունեցող: Խոհեմ, առաքինի, աստվածավախ կնոջ լեզվի վրա սիրառատ բարության օրենք կա:

Առակների գրքում խոսվում է նաև ինքնատիրապետման մասին. հարբեցողությունն ու որկրամոլությունը դատապարտվում են: Ինքնատիրապետումը օգնում է խուսափել նախանձից, որը փտություն է ոսկորների համար: Աստծու հավանությունն ունենալու համար պետք է չափավոր լինել ուտելու և խմելու հարցում: Ով չի շտապում բարկանալ, շատ խորաթափանց է, և նա ավելի մեծ է, քան քաղաք գրավող հզոր մարդը. <<սիրալիր պատասխանը մեղմացնում է զայրույթը, բայց խիստ խոսքը բարկություն է հարուցում>>, <<ամեն օրհնված մարդ պարզամիտ է, բայց բարկացող մարդը տգեղ է կերպարանքով>>:

Մարդու կյանքում շատ կարևոր է որոշակի նպատակներ դնելն ու դրանց հասնելուն ձգտելը: Կյանքի գերագույն հաճույքներից մեկը արարումն է, ստեղծելը, աշխատանքի արդյունքը տեսնելը: Մարդը չպետք է իրեն զրկի այս ամենից և չլինի ծույլ:

---

[2] Աստվածաշունչ,գիրք Առակաց 12:4 ,էջ 749

Առակաց գրքում նշվում է հետևյալ խրատը. <<մրջյունի մոտ գնա՛, նախանձի՛ր նրա գործերին և իմաստուն եղիր նրանից ավելի, քանզի նա ո՛չ հողագործ է, ո՛չ վերակացու, ո՛չ էլ գլխին տեր ունի, բայց ամռանը նա պատրաստում է իր ուտելիքը և հնձի ժամանակ ամբարում է իր առատ պաշարը: Կամ մեղվի մոտ գնա, տե՛ս, թե ինչպիսի գործունյա է նա և ինչպիսի ջանասիրությամբ է գործում: Թեպետև թույլ է ուժով, բայց սիրելի է ու մեծարելի բոլորի համար, որովհետև ինքը հարգեց իմաստությունը և արժանի եղավ հարգանքի: Մինչև ե՞րբ պիտի գամված մնաս, ո՛վ ծույլ, կամ ե՞րբ պիտի զարթնես քնից: Մի քիչ քնով ընկնես, մի քիչ նստես, մի քիչ էլ ձեռքերդ հանգչեցնես կրծքիդ, և, ահա, աղքատությունը կհասնի քեզ, և կարիքը կկանգնի դռանդ: Բայց եթե ծույլ չլինես, ապա քո ամառը պիտի հասնի աղբյուրի նման, և կարիքը, ինչպես չարամիտ այր, պիտի փախչի հեռու>>:[3]

Հիսուսի առակներում խոսում են և՛ ներկայի, և՛ ապագայի, և՛ տեսանելի ու անտեսանելի էակ-ների մասին, սովորեցնում բազում բաներ՝ հարություն, Հիսուս Քրիստոս, հանդերձյալ կյանք, արդարների հանգստություն և մեղավորների տառապանք, ինչպես նաև բարո-յական վարդապետություններ. <<Սաղմոսարանի յուրաքանչյուր բառը բովանդակում է մտքերի անհուն ծով>>:[4] Արդարների մասին Սաղմոսում նշվում է. <<Արդարի ունեցած քիչն ավելի լավ է, քան շատ ամբարիշտների ճոխությունը: Քանի որ ամբարիշտների բազուկները ջարդվելու են, բայց Տերն արդարներին նեցուկ է լինում: Տերը գիտի ուղիղների օրերը և նրանց ժառանգությունը հավիտյան է լինելու: Չար ժամանակներում չեն ամաչելու ու սովի օրերին բավարարված են լինելու>>: Արդարության հիմքում ընկած է արդարացի, անաչառ լինելը:

Աստվածաշնչի Հիսուսի առակներում կենդանի պատգամ են ողջ մարդկությանը: Ի հակա-դրություն հավիտենական Աստծու՝ մարդը մեղքի մեջ է ծնված ու փրկության կարիք ունի: Սաղմոսներ գիրքը ընդգծում է Աստծու օրենքը լսելու և Աստծուն ապավինելու անհրաժեշտությունը, զգուշացնում է չլինել ամբարտավան ու չգործել <<ծածուկ մեղքեր>>, խրախուսում է ընկերակցել ազնիվ ու ողջամիտ մարդկանց հետ: << Քանի որ դու Տիրոջը՝ մեր Ապավենին, քեզ ապաստարան դարձրիր, քեզ չարիք չի

[3] Աստվածաշունչ, գիրք Առակաց 6:6,7,8,9,10,11 էջ 743
[4] Մեկնութիւն առ Հռովմայեցիս

հասնելու, ու ոչ մի հարված չի մոտենալու քո հարկին>>, <<Աստված մեր ապավենն է ու մեր զորությունը, անմիջական օգնություն նեղության ժամին>>. այս Սաղմոսներում նշվում է Աստծուն ապավինելու կարևորության մասին:

Հիսուսի առակներում բացահայտում են մարդու ներաշխարհը, նրա իղձերն ու զգացմունքները: Հիսուսի առակներում սովորեցնում են ոչ միայն ապրել Աստծուն ապավինելով, երկյուղածությամբ և արդարությամբ, այլև ուսուցանում են, թե ինչպես և ինչ խոսքերով պետք է աղոթել կյանքի տարբեր իրավիճակներում: <<Երեսդ ծածկի՛ր իմ մեղքերից ու ջնջի՛ր բոլոր անօրենություններս: Մաքուր սիրտ ստեղծի՛ր մեջս և իմ ներսում շիտակ հոգի՛ նորոգիր: Փրկի՛ր ինձ արյան մեղքերից, իմ փրկության Աստված, ու իմ լեզուն բարձրաձայն երգելու է Քո արդարության մասին>>: Այս աղոթքը հոգևոր մաքրության համար է:

Այսպիսով Հիսուսի առակների բարոյական պատգամներն ու խրատները անհերքելի դեր ունեն մարդու բարոյական զարգացման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Այսօր դասագրքում առաջարկվող տարաբնույթ առակների մեջ կան աստվածաշնչյան առակներ, որոնց դաստիարակչական արժեքը դժվար է գերագնահատել:Այս գիտակցությամբ էլ նպատակահարմար ենք գտնում ներկայացնելու դաս – գիտափորձ՝ առակների ուսուցման շրջանակում՝ կարևորելով ընկերասիրությունը որպես սոցիալական արժեքի տարր:Կրկնության դասը կարելի է կազմակերպել նաև բաց դասի ձևով՝ տեսասահիկային ներկայացմամբ. այս դեպքում կունենանք այլ քայլաշարային եղանակ:

ԳԼՈՒԽ 2 «ՄԱՐԴԸ ՈՐԸ ՆԵՐԵԼ ՉԷՐ ՈՒԶՈՒՄ» ԱՌԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցում, մայրենիի ուսուցման ընթացքում, շատ կարևոր է երեխաների հետ կրոնի առնչությամբ զրույցներ, քննարկումներ կազմակերպելը, իսկ աստվածաշնչյան առակները հաջող առիթ են: Հինգերորդ դասարանի գրքում մեջբերված է «Մարդը, որ ներել չէր ուզում» առակը:

Առակի ուսուցումը դասարանում սկսվում է Առակի ընթերցանությունից:

«Մի թագավոր կար, որ ցանկացավ իր ծառաներից հաշվե– տվություն պահանջել: Երբ հաշվեքննություն սկսեց, նրա մոտ բերեցին մի պարտապանի, որ տասնյակ հազարավոր ոսկիների պարտք ուներ: Եվ քանի որ ի վիճակի չէր վճարելու, տերը հրամայեց, որ նրան իր կնոջ և զավակների հետ իբրև ստրուկի վաճառեն: Վաճառեն նաև այն ամենը, ինչ ուներ, և պարտքը վճարեն: Ծառան թագավորի ոտքերն ընկավ և աղաչեց՝ ասելով.

- Համբերիր և ժամանակ տուր ինձ, և ես բոլորը կվճարեմ:

Ծառայակիցը նրա ոտքերն ընկավ և սկսեց աղաչել.

- Համբերիր և ժամանակ տուր ինձ, և ես պարտքս կվճարեմ: Բայց սա չուզեց լսել: Ընդհակառակը, գնաց և բանտ նետել տվեց նրան, մինչև որ պարտքը վճարեր:

Մյուս ծառաները, պատահածը տեսնելով, շատ նեղվեցին, եկան ու իրենց տիրոջը պատմեցին այն ամենը, ինչ որ եղել էր:

Տերը կանչեց ծառային և ասաց.

– Չար ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի, որովհետև աղաչեցիր ինձ: Պետք է դու էլ խղճայիր քո ընկերոջը, ինչպես որ ես քեզ խղճացի:

Տերը բարկացավ և ծառային հանձնեց բանտապետին, մինչև որ վճարի իր բոլոր պարտքերը:»

Այսպիսով բացահայտենք ի՞նչ է սովորեցնում Աստվածաշնչյան այս առակը երեխաներին:

Առակի խորհուրդն է լինել բարի, ներողամիտ ու կարեկցող: Եթե կամենում ենք, որ մեզ ներեն, պետք է մենք էլ այլոց հանդեպ այդպես վարվենք, տեղին է հիշել

Աստվածաշնչյան ոսկե կանոնը , այն ամենը ինչ կկամենք, որ ձեզ անեն, այդպես էլ դուք վարվեք ուրշների հանդեպ։

Ընթերցումից հետո աշակերտներին հանձնարարվում է զուգահեռել առօրյա կյանքի դեպքերը բնագրում ներկայացված պատմությանը, ինչպես նաև «Մանուկների աստվածաշնչից» մեջբերել այլ նմանատիպ առակներ, ինչով երեխաները կառնչվեն աստվածաշնչյան զրույցներին։

Ուսուցիչը փորձում է հետևյալ հարցերի շնորհիվ բացահայտել թե աշակերտները որքանով են ըկալել առակը և առակի բովանդակությունը։

1. Հարցեր դասարանին
2. Արդյոք արդար վճիռ կայացրեց թագավորը։
3. Ինչ եք կարծում, կյանքում նման դեպքեր հաճախ են լինում
4. Վերաշարադրի՛ր առակի բովանդակությունը՝ որպես ականատես և բնութագրիր հերոսներին։
5. Նկարազարդի՛ր այս առակը՝ գլխագիր դնելով բուն միտքը։

ԳԼՈՒԽ 3 «ՄՈԼՈՐՅԱԼ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ» ԱՌԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ և ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ այդ ժամանակվա սովորույթների՝ կրտսեր որդին էր, որ պետք է ծնողների հետ լիներ, ծեր տարիքում հոգ տարներ նրանց մասին: Բայց նա հեռանում է, խախտում է այս սովորույթը, օրենքը: Հայրը կենդանի էր, իսկ ժառանգությունը սովորաբար բաժանվում է միայն մահից հետո: Կրտսեր որդին խախտեց այս ավանդույթը:

Ինչո՞ւ մոլորյալ որդին որոշեց վերադառնալ հոր մոտ». Արդյո՞ք միայն քաղցն էր պատճառը, որ վերադարձան : Նայեք նկարին, որ նկարիչը ցույց է տվել կրտսեր որդուն:

Նա գիտակցեց իր մեղքը, զղջաց դրանից, հասկացավ, որ արժանի չէ իր հոր որդի կոչվելուն և որոշեց վերադառնալ, որպեսզի գոնե իր վարձկանը լինի ուրիշների մեջ՝ այլևս չպահանջելով հայրական սեր և օգուտ, քանի որ ինքն իրեն անարժան էր համարում նրանցից: Ոչ թե քաղցն է, այլ, որ ամենակարևորն է, ամոթն ու մեղքը նրա ընտանիքի հանդեպ, որ նրան տանում են տուն:

Հայրը ուրախությամբ գրկեց նրան և նույնիսկ խնջույք կազմակերպեց՝ ի պատիվ նրա վերադարձի: Եվ դարձյալ հայրն իմաստուն էր. ոչ նախատինքի խոսք, ոչ բարոյականություն: Նա հասկանում է, որ իր որդուն տրված դասն իզուր չէր:

Սա հեքիաթ չէ երջանիկ ավարտով: Մենք չգիտենք, թե ինչպես ավարտվեց այս պատմությունը. արդյոք եղբայրները հաշտվել են, թե ոչ, արդյոք ավագ որդին գիտակցել է իր մեղքը: Մի բան, որ կարող ենք վստահ լինել մինչև վերջ – անսահման սիրով հոր և միայն հոր, իսկապես բարի է:

Ուսուցչի խոսքը. «որդի» բառը հնչում է մեր առակի վերնագրում, հետևաբար առակում կարևոր է ազգակցական կապի գաղափարը, որի հետ կապված է երկրի վրա ապրող յուրաքանչյուր մարդ. չէ՞ որ մենք բոլորս մեկի զավակներն ենք: Եկեք մտածենք, թե ծնողներն ինչ դեր են խաղում մեր կյանքում: Ի՞նչ են նրանք փնտրում երեխաներին սովորեցնելու համար : Ինչո՞ւ է հաճախ դժվար լինում ծնողների և երեխաների փոխհարաբերությունները:

Ի՞նչ է ցուցանում առակը

Ուսուցիչը փորձում է հետևյալ հարցերի շնորհիվ բացահայտել թե աշակերտները որքանով են ըկալել առակը և առակի բովանդակությունը։

- Ի՞նչ է զղջումը
- Գնահատի՛ր ավագ եղբոր պահվածքը
- Գնահատի՛ր հոր ներողամտությունը
- Դու ինչպե՞ս կվարվեիր մեծ եղբոր փոխարեն
- Ի՞նչ սովորեցիր այս առակից

Երբեք ուշ չէ ընդունել ձեր սխալները, զղջալ ձեր մեղքերի համար, վերադառնալ ճշմարիտ ուղու վրա և ներում ստանալ:

Մարդն արժանի է ներման, եթե անկեղծորեն զղջում է և ափսոսում կատարածի համար:

Եզրակացություն. իհարկե, ծնողները միշտ կարող են հասկանալ և ներել իրենց երեխաներին, բայց պետք է փորձենք չնեղացնել նրանց: Չէ ՞ որ սրանք մեզ համար ամենաթանկ մարդիկ են ։ Թող այս դասը երկար մնա ձեր հիշողության մեջ և օգնի ձեզ հետևել ճշմարիտ ուղուն նրանց կողքին, ովքեր թանկ են ձեզ համար և ում համար թանկ եք:

Երեխաներին առակի միջոցով մարդկային մոլորություններից նախանձի և չարամտության մասին արժեքային համակարգ ձևավորման համար ուսուցիչը ևս մեկ աստվածաշնչյան առակ է հանձնարրում լրացուցիչ ընթերցելու՝ «Այգու մշակների վարձը»։

Առակի հիմնական եզրակացությունը՝ ով հիմա վերջինն են, պիտի առաջին լինեն, և առաջինները՝ վերջին. որովհետև կանչվածները շատ են, բայց ընտրվածները՝ քիչ։

Անդրադարձ— լրացնել աղյուսակը

«Մարդը որը ներել չէր ուզում»

Ո՞րն է առակի ամենակարևոր ասելիքը	Ի՞նչ է ներողամտությունը	Ինչպե՞ս ես վերաբերվում ներողություն հայցողին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականի համար, քանի որ առակներից կարելի է պատկերացում ստանալ միմյանց հարևանությամբ (հաճախ նույն քաղաքում) ապրող ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մասին: Ստեղծված լինելով գերազանցապես քաղաքային միջավայրում, առակագրքերի մեջ եղած ստեղծագործություններում արտացոլվել է այդ միջավայրի կյանքն ու կենցաղը:

- Հասարակական գիտակցության բարոյական ձևը, արտացոլելով մարդկանց վարքն ու վարվելաձևը բարոյականի և անբարոյականի, բարու և չարի, խղճի, պարտքի և պատասխանատվության, արժանապատվության և երջանկության հասկացությունների, բարոյական ապրումների և զգացմունքների միջոցով, արժեքավորում և գնահատում է դրանք, դարձնում բարոյական հարաբերությունները կարգավորող նորմեր, սովորույթներ և ավանդույթներ:
- Յուրաքանչյուր մարդ բարոյական միևնույն արարքը գնահատում և արժեքավորում է բարոյական իր ըմբռնումներով և և գիտակցումով:
- Բարոյական արժեքների, նորմերի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար մարդուն օգնում է Աստվածաշունչը: Աստվածաշնչի շնորհիվ յուրաքանչյուր մարդու համար սեփականություն են դառնում շատ կարևոր գիտելիքներ, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից մարդուն:
- Հասարակությունը կարիք ունի բարոյական արժեքների մի այնպիսի հիմքի, որը մարդկանց ապահովություն և առաջնորդություն կտա:
- Որպեսզի հասարակությունը լինի կայուն, մարդիկ պետք է բոլորի կողմից ընդունված այնպիսի ամուր չափանիշներ ունենան, որոնք կսահմանեն, թե որն է բարին ու ճիշտը, չարն ու սխալ: Այս նպատակին հասնելու համար մարդիկ պետք է որպես բարոյական հիմք ընդունեն Աստվածաշնչում նշված բարոյական առակները, խրատները, պատգամները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Աղայան Է. Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Երևան, 2014, Մանմար հր.
2. Աստվածաշունչ, Մայր Աթոռ, Սբ. Էջմիածին, 2003թ.
3. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան Երևան, 2011թ
4. Հայ եկեղեցու պատմություն V դասարան , Երևան , 2019թ
5. Ղուլումչյան Գ., Մանկավարժություն, Երևան, 2005թ
6. Մայրենի-5, Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Եր., 2010:
7. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
8. https://www.vsu.am/grqer/2018/aprak/melqonyanroza.pdf .